





տառեր և եթէ կային, այն էլ այնքան քիչ, որ միայն հայերէն այցեւորներ էին տպում:

Մի քիչ աւելի քանակութեամբ տառեր ունէր ռուս Սիմեոնովի տպարանը, այն էլ շատ սահմանափակ չափով, հին ձևի, բոլորովին մաշված և կարծուում է, որ այդ պիտի լինէր հայկական տպարանի մնացորդը: Միւս զժառուրիւնն էլ այն էր, որ Աստրախանում հայ գրաշարներ չկային, ուստի խումբը որոշումն արեց նոր տառեր բերել տալ:

Տիբիսի Մադերի ձուլարանին պատէր արեց 20 փութ երկու տեսակի տառեր, որի համար հարկաւոր գումարը՝ 600 ռուբլի, հիմնադիրները ձեռք բերին Աստրախանի, գործին համակողմ, վաճառականների մէջ ժողովարարութիւն անելով: Միևնոյն ժամանակ հրաւիրեցաւ մի հմուտ գրաշար Տիբիսից:

Սկզբնական այդ երկու զժառուրիւնները հարթիւց յետ, պատասխանատու խմբագիր հրաւիրեցաւ երիտասարդ վաճառական Կարապետ Սաշատրեանը:

Ան այսպէս «Լրարեր»ի անդրանիկ համարը լոյս տեսաւ 1908 թւականի ապրիլի 27 ին, կիրակի օրը, օրաթիւրթի դիրքով: Տեղացիների համար բաժանորդագինն էր 3 ռուբլի, իսկ գրսի բաժանորդների համար 4 ռ:

Թերթը անկուսակցական էր, սակայն որոշ ուղղութեամբ:

«Լրարեր»ի լոյս տեսնելը նորութիւն էր Աստրախանում, ուստի որոշ չափով հետաքրքրեց հայ ընթերցանութիւնից խորթացած տեղական հասարակութեանը և վճարող բաժանորդների թիւը հասաւ մինչև 170:

Հաշուելով հատավաճառը և նւէրները, «Լրարեր»ը քաղաքում տարածուում էր 200 օրինակից աւելի: Մի այդքան էլ ցրում էր գաւառներում, ուրեմն ընդհանրապէս տարածուում էր 400 օրինակից աւելի, և իւրաքանչիւր անգամ տպագրուում էր 500 օրինակ: «Լրարեր»ը բացի իր տեղական աշխատող ոյժերից, ունէր և իր մշտական աշխատակիցները Մոսկուայից, Տիբիսից, Բագրից, Երևանից, Անդրկասպեան աշխարհից, Ղալաբից, Մոզդոկից, Ստաւրոպոլից Թաւրիզից, Վանից, Բուլղարեայից և այլն:

Լրագիրը իր գոյութիւնը պահպանեց 1908 թ. ապրիլի 27-ից, մինչև 1909 թ. հոկտեմբերի 18-ը: Ուղիղ տարի ու կէս գոյութիւնից յետ, թերթը դադարեց:

Թերթը սկզբում տպագրուում էր ռուս Ս. Ն. Սիմեոնովի շոգեշարժ տպարանում, ապա տառերն ու թերթի տպագրութիւնը փոխադրեց Ա. Ապրեսեանի նորարաց տպարանը:

«Լրարեր»ի տարեկան ընդջէն համնում էր մօտ 1800 ռ. որպիսի ծախսը և մահարեր եղաւ լրագրի համար և դադարեց, սակայն տեղը բաց մնաց:

Այդ բացը լրացնել կամեցաւ տպարանատէր Արէլ Ապրեսեանը: Հողը պատրաստ էր, կային «Լրարեր» տառերը և սեպհական տպարան: «Լրարեր»ի դադարելուց ուղիղ մի տարի անցած՝ հետեւալ 1910 թ. հոկտեմբերի 24-ին Ապրեսեանը իր խմբագրութեամբ լոյս ընծայեց «Մեր Կեանքը» պատկերազարդ շաբաթաթիւրթի առաջին համարը, քառածալ դիրքով բաժանորդագինը Աստրախանում 3 ռ. դուրսը 4 ռ:

Այդ մի փորձնական համար էր, որ այլ ևս չշարունակեց:

Հետեւալ 1911 թ.ին Ապրեսեանը զարձեալ մի այդպիսի համար լոյս ընծայեց և զարձեալ գաղարեց, մինչև որ 1912 թ.ին մարտի 11-ից «Մեր Կեանքը» սկսեց կանոնաւոր հրատարակել օրադրի ծաւալով և առանց պատկերների:



Այս անգամ «Մեր Կեանք»ի շուրջը գումարեցան մի խումբ երիտասարդներ, որոնք կամենալով թերթը հաստատուն հիմքերի վրա դնել, իրենց միջից ընտրեցին երկու կազմ—խմբագրական և անտեսական. սակայն այդ ջանքերն ևս չօգնեցին և «Մեր Կեանքը» 22 համար տալուց յետոյ, նոյն թ.ին օգոստոսին բոլորովին դադարեց:

Թերթը համեմատելով «Լրարերի» հետ աւելի քիչ ծախս ունէր, նա տպագրուումէր սեպհական տպարանում, շարուումէր ոչ յատկապէս ուրիշ քաղաքից հրաւիրած գրաշարի, այլ հէնց տպարանի ռուս գրաշարներից մէկի ձեռքով, որ սովորել էր հայերէն շարելը, և շարուումէր շատ յաջող: Տպագրուումէր 200 օրինակ և գլխաւորապէս տարածուում քաղաքում: Վճարող բաժանորդներ գրեթէ չուներ:

Դարձեալ մեր առաջն է նոյն բացը և սաստիկ զգալի է ջերմ, շիտակ, զօրեղ գաւառական թերթի բացակայութիւնը Աստրախանում:

Ո՞ւր ևս տպագրական խօսքի ապագայ մարդարէ, արի, քեզ է սպասում հրապարակը:

Հոկտ. 11.

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

